ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ
N 3

ք. Կապան «15» հունվարի 2020թ

ՀՀ Սյունիքի մարզպետարանը ի դեմս գլխավոր քարտուղար Է. Մարտիրոսյանի, որը գործում է մարզպետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ դրամաշնորհ տրամադրող), մի կողմից և «Կապանի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ-ը՝ ի դեմս տնօրեն Գ.Մմբատյանի, որը գործում է ՊՈԱԿ-ի կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ դրամաշնորհ ստացող), մյուս կողմից, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 26.12.2019թ թիվ 1919-Ն որոշումը կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1.Պայմանագրի առարկան

1.1 Սույն պայմանագրով Պատվիրատուն Կատարողին պահպանման ծախսերի համար հատկացնում է 15040.8 հազ. /Տասնհինգ միլիոն քառասուն հազար ութ հարյուր / ՀՀ դրամ, այդ թվում ԱԱՀ-ն՝ 2506.8 հազ.դրամ :

2.Գումարը տրամադրելու և ծախսելու կարգը

2.1. Սույն պայմանագրի 1.1 կետում նշված միջոցները պետք է ծախսվեն բացառապես սույն պայմանագրի 1.1 կետում նշված նպատակներին համապատասխան :
2.2.Կատարողը պետք է հաշվապահական փաստաթղթերը վարի օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան և ապահովի սույն պայմանագրի 1.1 կետով նախատեսված նպատակների իրականացման հետ կապված փաստաթղթերին ծանոթանալու՝ Պատվիրատուի ներկայացուցչի հնարավորությունը:
2.3. Սույն պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո Պատվիրատուն սույն պայմանագրի 1.1. կետում նշված գումարը ըստ հավելվածի փոխանցում է Կատարողի գանձապետական հաշվին:

3.Հաշվետվությունը

3.1. Հաշվետվությունը ներկայացվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. Այլ դրույթներ

4.1. Սույն պայմանագիրը ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 25.12.2020թ.:
4.2.Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ , որը կնքվում է գրավոր:
4.3. Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

5.Կողմերի իրավաբանական հասցեները

Դրամաշնորհ տրամադրող	Դրամաշնորհ ստացող
ՀՀ Սյունիքի մարզպետարան	«Կապանի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ
Ք.Կապան Նժդեհի 3	Ք. Կապան
ՀՀ ֆին.նախ. գործնական վարչ	ՀՀ ֆին.նախ. գործարկ. վարչ
h/h 900311440027	hh 900318000024
հհվհ 09405375	հհվհ 09408106
Է.Մարտիրոսյան	Գ.Մմբատյան